

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԿԱՆԻՅ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄԻՍ
ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՊՈՐՏԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ
**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի № 511-Ա որոշումը ՀՀ կառավարության ծրագրերի մասին, որը հավանության է արժանացել ՀՀ Ազգային ժողովում, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը, 2013-2017 թվականների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ծրագիրը, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրությունը՝

«Բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում ՀՀ հավաքական թիմերի ու մարզիկների արդյունավետ մասնակցության ապավովումը» ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Պետական աջակցության ծրագրում ընդգրկված մարզական ֆեդերացիաներին ամեն տարի հատկացվել է **929,967.2 դրամի չափով** ֆինանսավորում (2014 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված են եղել 30 մարզական ազգային ֆեդերացիաներ, իսկ 2015-ին ավելացել է ևս 2 ֆեդերացիա), ինչի շնորհիվ անցկացվել են Հայաստանի Հանրապետության 132 առաջնություններ, կազմակերպվել 180 ուսումնամարզական հավաքներ, և ՀՀ հավաքական թիմերը մասնակցել են 198 միջազգային մրցումների:

Հաշվետու ժամանակահատվածում 13 մարզաձևերի հավաքական թիմի անդամները աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, պատանեկան օլիմպիական խաղերում նվաճել են ընդհանուր հաշվարկով 145 մեդալ, այդ թվում՝ 40 ոսկե, 48 արծաթե և 57 բրոնզե: Այստեղ կարևոր է առանձնացնել Նանկինում կայացած պատանեկան օլիմպիական 2-րդ խաղերը, որտեղ փայլուն հանդես եկան մեր հավաքականի մարզիկները: Մեդալակիր մարզիկների պարգևատրումն իրականացվել է ՀՀ կառավարության 2001 թվականի № 462 որոշման համաձայն:

Մարզիկների և մարզիչների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով իրականացվել է տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության և Հայաստանում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի, սամբո և շախմատ մարզաձևերի աշխարհի չեմպիոններին ամենամյա թոշակների վճարման ծրագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը օժանդակել է ՀՀ հավաքական թիմերի մարզիկների բուժզննման, բուժօգնության և դոպինգ ստուգման գործընթացին:

Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, շախմատի համաշխարհային օլիմպիադային մասնակցած ՀՀ հավաքական թիմը և պատվիրակության անդամները ապահովվել են լրակազմ մարզահանդերձանքով:

Համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2010 թ. օգոստոսի 25-ի № 85-Ա/1 և ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թ. սեպտեմբերի 27-ի № 1080-Ա համատեղ հրամանի՝ ներկայումս ՀՀ պաշտպանության նախարարության մարզական վաշտում ծառայում են 59 բարձրակարգ մարզիկ-զինծառայողներ՝ ծառայության ընթացքում նրանց հետագա մարզումների և մրցումների մասնակցության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով:

Ավարտվել է 2015 թվականի ամառային զորակոչին մարզական վաշտ գործուղվող մարզիկների տվյալների հավաքման գործընթացը, ու ևս 32 մարզիկ կհամալրեն մարզական վաշտում ծառայողների թիվը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ՊՆ № 55537 զորամասը ներկայացնող 6 մարզիկ զինծառայողներ աշխարհի և Եվրոպայի առաջնություններում գրավել են 1-ին մրցանակային տեղը:

Վարչությունը պատրաստել է համատեղ հրամանում փոփոխություն կատարելու վերաբերյալ նախագիծ և ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության քննարկմանը:

Ուսումնասիրվել են ֆուտբոլի, ըմբշամարտի, ձյուդոյի ազգային ֆեդերացիաներից ստացված հայտերը լավագույն մարզիկներին ամառային և ձմեռային զորակոչերից տարկետում տալու վերաբերյալ (2014 թվականի ամառային և ձմեռային զորակոչ, 2015 թվականի ամառային զորակոչ): Հաշվետու ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացվել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ 17 որոշման նախագիծ, որոնք ՀՀ կառավարության կողմից հաստատվել են, իսկ 3 մարզիկ ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից:

Վարչությունն իրականացնում է մարզական կազմակերպությունների կողմից ներկայացված պատվավոր և մարզական կոչումների համար թեկնածուների հայտերի հավաքման, ուսումնասիրման, վերլուծման աշխատանքներ: Հաշվետու ժամանակամիջոցում հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի մեդալով պարգևատրվել է 2 մարդ, Մովսես Խորենացու մեդալով՝ 1 մարդ, Նախարարության «Բացառիկ ծառայությունների համար» մեդալով պարգևատրվել են 13 մարդ, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի» կոչում է շնորհվել 4 մարդու, «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի» կոչում՝ 4 մարդու, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատողի» կոչում է շնորհվել 41 մարդու, «Հայաստանի Հանրապետության սպորտի վաստակավոր վարպետի» կոչում՝ 3 մարդու, «Հայաստանի Հանրապետության միջազգային կարգի սպորտի վարպետի» կոչում՝ 28 մարզիկի, «Հայաստանի Հանրապետության սպորտի վարպետի» կոչում՝ 137 մարզիկի:

Ծրագրի իրավական հիմքերն են՝ «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2006 թվականի № 587-Ն որոշումը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության նպատակով վարչությունը ապահովել է ցուցադրական ելույթներ, որի շրջանակներում տարբեր մարզաձևերը ներկայացնող ֆեդերացիաների մարզիկները ցուցադրական ելույթներ են իրականացրել Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից հրապարակում: Ծրագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց բնակչության շրջանում: Ցուցադրական ելույթներն իրականացվել են 2014 թվականի աշնանը:

2015 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Նախարարության նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ կազմակերպվել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի չեմպիոնների հանդիպումներ հանրակրթական դպրոցների աշակերտների հետ սպորտի քարոզչության նպատակով՝ անվանի մարզիկների հետ աշակերտներին ծանոթացնելու, մարզիկներին մեծարելու և դպրոցականներին մարզաձևերի ընտրության կողմնորոշման հարցում աջակցելու համար:

ՀՀ վարչապետի կողմից 2014 թվականի մայիսի 30-ին ԱՊՀ պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի շրջանակներում ստորագրվել է «ԱՊՀ ազգային մարզաձևերի աջակցության ու զարգացման մինչև 2020 թվականն ընկած ժամանակամիջոցի ծրագրի և դրա իրականացմանն ուղղված 2015-2017 թվականների միջոցառումների պլանը»:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում զարգացնել ազգային մարզաձև կոխ ըմբշամարտը, որը մոռացության էր մատնված: Վարչության աշխատակիցները «Կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նորընտիր ղեկավարության հետ համատեղ մշակել են Հայաստանի Հանրապետությունում ազգային կոխ ըմբշամարտի հետագա զարգացման ու տարածման ծրագիր:

2015 թ. հունիսի 12-28-ը Բաքու քաղաքում անցկացվելու են Եվրոպական առաջին խաղերը: Հայաստանի Հանրապետությունը մասնակցելու է 6 մարզաձևերից՝ ըմբշամարտ, բռնցքամարտ, ձյուդո, սամբո, թաեքվոնդո և հրաձգություն: Հաղթողներին և մրցանակակիրներին խրախուսելու նպատակով ներկայումս մշակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի օլիմպիական, պարաօլիմպիկ, սուբօլիմպիկ խաղերում և աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում առավել բարձր ցուցանիշների հասած մարզիկներին, մարզիչներին, բժիշկներին և մարզական կազմակերպություններին դրամական մրցանակներ շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության № 462 որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշման նախագիծ: